

**Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՆՈՐ ԿԻՐԱԿԻՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(19 ապրիլի 2009 թ.)

Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ, Ամէն.

Նորոգեալ կրդգիք առ Աստուած, եկեղեցիք հեթանոսաց,
Ի գլխոց լեռանց զոչնամբ ձայնի, Կուք ըզփառս Աստուծոյ,
Եւ պարմեցէք զքաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:
Շարակնոց
(Կանոն Նոր Կիրակէի)

Սիրելի՛ հավաքացյալ քույրեր եւ եղբայրներ, այսօր առաքելական մեր սուրբ եկեղեցում Կրկնազարիկ է, ուր վերստին հնչում է Նարոթյան ավետարեւր պարգամը. «Չէ՛ աստ, այլ յարեաւ» (Մատթ. ԻԸ 6): Նրաշափառ Նարոթյունից հետո, երբ մեր Տերը, իր խոսարման համաձայն, Գալիլիայում հանդիպեց աշակերտներին, նրանց հետեւյալը պարգամեց. «Գնացէք ուրեմն աշակերտ դարձրէք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Նոր եւ Որդու եւ Սուրբ Նոգու անունով: Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պարտիրեցի: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 19-20):

Իրավամբ, առաքյալները, իբրեւ Նարոթյան ականապետ վկաներ, եղան նաեւ այդ մեծ եւ աստվածային լուսեղեն իրականության քարոզիչները՝ իրենց անսասան հավաքով եւ անձախելի զոհողությամբ, առ Աստված ցուցաբերած՝ մահվան ընդառաջ գնալու կամավոր հանձնառությամբ, միշտ հույսի աչքերով հավիտենական կյանքին նայող իրենց առաքելությամբ:

Այո՛, սիրելիներ, «Եւ ահաւասիկ ես ընդ ձե՛զ եմ» (Մատթ. ԻԸ 20) փիրավանդ պարգամն այսօր նույնպէս ուղեկից է մեզ մեր կյանքի բոլոր օրերում:

Նարոթյան հիսնօրյա հիշատակության այս կիրակին կոչվում է Կրկնազարիկ, որը երբեմն անվանվում է նաեւ «Նոր կիրակի», քանի որ նոր է այս փոնը, իսկ նրա խորհուրդը միանգամայն հուսադրող եւ չքնաղ ամենքիս համար: Նոր է կոչվում, որովհետեւ սկիզբ է դառնում մի նոր կյանքի, որը, անցյալը հնացնելով, ինքը պարճառ է դառնում նոր գալիքի, քանզի Քրիստոսի հարությամբ ամեն ինչ վերստին նորոգվեց, հինն անցավ, եւ ամեն ինչ նոր եղավ: Իր այս անվանման համար պարտական ենք թերեւս մեր Եկեղեցու հայրերին, որոնք իմաստուն կերպով դասակարգել են Նարոթյան հիսնօրյա հիշատակության այս յոթ կիրակիները՝ իբրեւ հիշատակություն եւ իբրեւ հիմք ընդունելով Գործք Առաքելոցի հետեւյալ խոսքերը. «Նա իր չարչարանքներից յետոյ իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շար ապացոյցներով՝ քառասուն օրերի ընթացքում երեւալով նրանց եւ խոսելով Աստծու արքայութեան մասին» (Գործք Ա 3):

Այո՛, սիրելի՛ հավաքացյալներ, այժմ՝ գարնանային հիասքանչ ու արեւաշող օրերին,

նուած է խաբեպարի ցանկութիւններով. նորոգուեցէ՛ք ձեր մարքով եւ հոգով ու հագէ՛ք նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծո՛ւ՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ» (Եփես.Դ 22-25):

Սիրելիներ, մարդկային կյանքն այսօր ավելի քան երբեւէ կարիքն ունի Քրիստոս վերանորոգման, ինքնամաքման, քանզի կյանքը երկրի վրա իր գոյությունը շարունակում է ոչ միայն պարզաբերելով եւ սերնդագործելով, այլ նաեւ ու առավելաբար վերանորոգվելով: Եկեք, ուրեմն, սիրելի՛ հավատացյալներ, լայն բանանք մեր հոգու աչքերը եւ տեսնենք Քրիստոսի հարուցյալ մարմնից ճաճանչող ու ցուացող փրկարար լույսը, որը պարբարար է մեզ դեպի երկինք եւ հավիտենականություն առաջնորդելու:

Արդ, սիրելիներ, հինանց այս շրջանին մենք՝ իբրեւ ազգ եւ ժողովուրդ, պարտավոր ենք միասնական կամքով, ինչպես նաեւ ամուր եւ անձախելի հավատքով ընդառաջ գնալ մեր Տիրոջը, խնդրել Նրանից որ խաղաղության ու անխռովության մեջ պահի ամենքիս: Ինչպես նաեւ այս Սուրբ տաճարում միասնաբար աղոթք վերառաքենք Նրան՝ մեր հոգու եւ մարքի ամբողջ գործությամբ հայցելով, որպեսզի մաքրապես արժանի լինենք Նրա Սուրբ Մարմնին ու Արյանը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն: